

5.10. 2009թ. դեկտեմբեր ամսվա հիդրոոդերևութաբանական վիճակը Հայաստանում

Ըստ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի պետական ծառայության տեղեկատվության, դեկտեմբերին օդի միջին ամսական ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում եղել է նորմայից բարձր 3-4 աստիճանով:

Միջին տասնօրյակային ջերմաստիճանն առաջին տասնօրյակում եղել է նորմայից ցածր 1-2 աստիճանով, երկրորդ տասնօրյակում՝ նորմայից բարձր 1-3 աստիճանով, երրորդ տասնօրյակում՝ 4-9 աստիճանով:

Միջին առավելագույն ջերմաստիճանը Սյունիքի հովիտներում կազմել է +11 +12°C, ՀՀ Լոռու, Տավուշի մարզերում և Արարատյան դաշտավայրում՝ +8 +9°C, Սյունիքի նախալեռներում՝ +4 +9°C, լեռնային շրջաններում՝ +1 +4°C:

Միջին նվազագույն ջերմաստիճանը լեռնային շրջաններում կազմել է -4 -7°C, ՀՀ Լոռու մարզում՝ -1 -5°C, Սյունիքի նախալեռներում՝ -4 +1°C, Արարատյան դաշտավայրում՝ -1 +1°C, ՀՀ Տավուշի մարզում՝ -2 +2°C, Սյունիքի հովիտներում՝ 0 +5°C:

Ամենաբարձր ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում դիտվել է դեկտեմբերի երրորդ տասնօրյակում և առանձին օրերին գերազանցել դիտված բացարձակ առավելագույն արժեքները: ՀՀ Տավուշի մարզում և Սյունիքի հովիտներում գրանցվել է +15 +20°C, ՀՀ Լոռու մարզում և Արարատյան դաշտավայրում՝ +11 +16°C, Սյունիքի նախալեռներում՝ +8 +13°C, լեռնային շրջաններում՝ +5 +10°C:

Ամենացածր ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում դիտվել է դեկտեմբերի 1-4-ին: Լեռնային շրջաններում գրանցվել է -9 -14°C (Մասրիկ գյուղում (ՀՀ Արարատի մարզ)՝ -17°C), ՀՀ Լոռու մարզում և Արարատյան դաշտավայրում՝ -5 -10°C, ՀՀ Տավուշի մարզում և Սյունիքի նախալեռներում՝ -3 -8°C (ք.Սիսիանում (ՀՀ Սյունիքի մարզ)՝ -13°C), Սյունիքի հովիտներում՝ -4 +1°C:

Դեկտեմբեր ամսվա ընթացքում հանրապետության տարածաշրջանների մեծ մասում տեղումների քանակը եղել է նորմային մոտ և բարձր: ՀՀ Շիրակի, Կոտայքի, Արագածոտնի մարզերում և Արարատյան դաշտավայրում այն կազմել է նորմայի 90-160%-ը, ՀՀ Լոռու և Տավուշի մարզերում՝ 70-105%, ՀՀ Գեղարքունիքի և Սյունիքի մարզերում՝ 50-90%:

Դեկտեմբերի 8-10-ին, 14-ին, 17-19-ին, 23-25-ին, 27-ին և 30-31-ին տարածաշրջանների մեծ մասում դիտվել են տեղումներ (հովտային շրջաններում՝ անձրև):

Դեկտեմբերի 4-ին, 13-15-ին, 19-21-ին և 28-29-ին՝ ՀՀ Լոռու մարզում, 13-14-ին, 19-21-ին և 28-ին՝ ՀՀ Գեղարքունիքի մարզում, 14-ին՝ ք.Գորիսում (ՀՀ Սյունիքի մարզ) և ք.Ստեփանավանում (ՀՀ Լոռու մարզ), 28-ին՝ ք.Իջևանում (ՀՀ Տավուշի մարզ) դիտվել է քամու ուժգնացում, արագությունը՝ 12-18 մ/վրկ, պոռթկումները՝ 16-26 մ/վրկ: Դեկտեմբերի 4-ին, 8-12-ին, 17-20-ին և 23-31-ին առանձին շրջաններում դիտվել է մառախուղ 50-500 մ տեսանելիությամբ: Դեկտեմբերի 30-ին ք.Ապարանում (ՀՀ Արագածոտնի մարզ) դիտվել է առատ ձյուն՝ 30մմ/12ժ:

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Դեկտեմբերի 31-ի դրությամբ ձյան ծածկույթի բարձրությունը Արագած բարձր լեռնային կայանում կազմել է 136 սմ, Ամբերդ գյուղում (ՀՀ Արմավիրի մարզ) և Որոտանի լեռնանցքում (ՀՀ Սյունիքի մարզ)՝ 53 սմ, ք.Ջերմուկում (ՀՀ Վայոց ձորի մարզ)՝ 34 սմ, Աշոցք գյուղում (ՀՀ Շիրակի մարզ) և Անանուն լեռնանցքում (ՀՀ Արարատի մարզ)՝ 25 սմ, ք.Ապարանում՝ 18 սմ, մնացած լեռնային շրջաններում՝ 1-10 սմ: Նախալեռնային և հովտային շրջաններում ձյան ծածկը բացակայել է:

Դեկտեմբերին հանրապետության գետերի մեծ մասում միջին ամսական ելքերը կազմել են նորմաների 120-130%-ը:

Սևանա լճի մակարդակը դեկտեմբեր ամսվա ընթացքում իջել է 3 սմ-ով և 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել 1899.23 մ, որը 2008թ. նույն օրվա համեմատ բարձր է 38 սմ-ով: